# ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԿՈՆԴԱԿԸ ՍԵՆ ԱՐԵՎՇԱՏՅԱՆԻՆ «Ս. ՍԱՀԱԿ – Ս. ՄԵՍՐՈՊ» ՇՔԱՆՇԱՆՈՎ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

## ԳԻՐ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ՕՐՀՆՈՒԹԵԱՆ ԵՒ ԳՆԱՀԱՏԱՆԱՑ ԱՌ ՍԻՐԵՑԵԱԼ ՈՐԴԻՆ ՄԵՐ ԵՒ ՀԱՐԱԶԱՏ ԶԱՒԱԿՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ ՍՐԲՈՅ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԵԾԱՐԳՈՅ ՏԻԱՐ ՍԷՆ ԱՐԵՒՇԱՏԵԱՆ, ՈՐ ՅԵՐԵՒԱՆ

Ուրախութիւնն ունենք Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից Հայրապետական Մեր օրհնութիւնը յղելու Ձեզ եւ գնահատանքի Մեր խօսքը բերելու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու արժանաւոր ու փաղանդաշատ զաւակիդ փարիների արդիւնաշատ գործունէութեանը:

Շուրջ երկու տասնամեակ Դուք պնօրէնն էք Երեւանի Մաշտոցի անուան Մատենադարանի եւ Ձեր հոգու ողջ նուիրումով ու եռանդով ջանքեր էք ներդնում, որպէսզի գիտական հեղինակաւոր հաստատութիւնը յաջողութեամբ իրականացնի իր առաքելութիւնը: Խնամքով պահպանելով սրբազան մասունք դարձած հազարաւոր մեր ձեռագիր մատեանները, ուսումնասիրելով եւ ներկայացնելով մեր գրաւոր հարուստ ժառանգութիւնը, Դուք եւ Ձեր շնորհաշատ աշխատակիցները սերունդներին էք փոխանցում նաեւ մեր նախնեաց իմացութեան սէրը, հաւատն ու արժէքները: Պահպանուող հոգեւոր գանձերով Մատենադարանը եղել եւ շարունակում է հարազատօրէն կապուած մնալ Հայ Եկեղեցուն, եւ այսօր առանձնակի գնահատանքով ենք անդրադառնում, որ Ձեր նախանձախնդրութեամբ առաւել բազմապատկուում ու զօրանում է Մատենադարանի գիտական համագործակցութիւնը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ու մեր Եկեղեցու թեմերի հետ:

Մեծարգոյ պրն Արեւշատեան, մեծ ու գնահատելի է Ձեր գիտական վաստակը: Մայր Հայրենիքում ու նրա սահմաններից հեռու լայնօրէն ծանօթ են հայ հին եւ միջնադարեան փիլիսոփայական մտքի պատմութեանը նուիրուած Ձեր մէնագրութիւնները, գրքերն ու հրապարակումները: Տասնամեակների Ձեր նուիրեալ ու ջանադիր աշխատանքով ընդարձակ ծանօթագրութիւններով ու մեկնաբանութիւններով, հայերէն ու ռուսերէն թարգմանութիւններով միմեանց յաջորդեցին Դաւիթ Անյաղթի «Սահմանք Իմաստասիրութեան», «Մեկնութիւն «Ստորոգութեանցն» Արիստոտէլի» եւ այլ աշխատութիւնների հրապարակումները, որոնց շնորհիւ գիտական հանրութիւնը ծանօթացաւ հայ փիլիսոփայական մտքի ռահվիրայի ստեղծագործութիւններին:

Մենք քաջատեղեակ ենք նաեւ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու հանդէպ Ձեր անմնացորդ սիրուն ու նուիրումին, որը գնահատել են փակաւին Վազգէն Ա եւ Գարեգին Ա երջանկայիշատակ Մեր նախորդները:

Մեծարգոյ պրն Արեւշատեան, առ ի գնահատութիւն հայ գիտութեանն ու մշակոյթին մատուցած Ձեր ծառայությունների ու վաստակի, Հայրապետական այսու Կոնդակով շնորհում ենք Ձեզ Առաքելական մեր Սուրբ Եկեղեցու

## ՍՈՒՐԲ ՍԱՀԱԿ - ՍՈՒՐԲ ՄԵՍՐՈՊ

պատուոյ բարձր շքանշանը:

Աղօթում ենք, որ Բարին Աստուած պարգեւի Ձեզ քաջառողջութիւն, նոր եռանդով ու ներշնչումներով լեցուն կեանքի երկար օրեր, որպէսզի շարունակէք Ձեր արդիւնաշատ ծառայութիւնը հայ դպրութեանը, մեր Հայրենիքին, ժողովրդին ու Առաքելական մեր Սուրբ Եկեղեցուն: Թող Տիրոջ շնորհն ու օրհնութիւնը անպակաս լինի ընտանեկան Ձեր յարկից ու Ձեր կեանքից:

*Ողջ լերուք ի Տէր, զօրացեալ շնորհօք Սուրբ Հոգւոյն եւ յաւէտ օրհնեալ ի Մէնջ. ամէն:*

Օրհնութեամբ՝

**ԳԱՐԵԳԻՆ Բ**
**ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ**

Տուաւ Կոնդակս ի 15-ն Նոյեմբերի
Ցամի Տեառն 2004 եւ ի թուին հայոց ՌՆԾԳ
ի Մայրավանս Սրբոյ Էջմիածնի
ընդ համարաւ 265